<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան 16.06.2023թ.

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝

1. Դիտորդ խորհրդի նախագահ՝ Արսեն Չիտչյան
2. Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան
3. Դիտորդ խորհրդի անդամ՝Գևորգ Ավագյան
4. Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան
5. Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան
6. Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան
7. Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան

Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհրդի նիստը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

Նիստի օրակարգը՝

1. <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանի վերաբերյալ՝ Արթուր Լևոնի Ղալթախչյանի ներկայացուցիչ, լիազորված անձ Մելանյա Արթուրի Դիմիտրյանի դիմումի հիման վրա <<ՍԳԿԿ>> ԻԿ Դիտորդ խորհրդին 22.05.2023թ.-ին ներկայացված՝ 12.04.2023թ.-ի եզրակացության քննարկում:

2. <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Ա/Ձ Կարեն Խուդաթյանի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ռաֆիկի Մարտիրոսյանի վերաբերյալ՝ Արթուր Լևոնի Ղալթախչյանի ներկայացուցիչ, լիազորված անձ Մելանյա Արթուրի Դիմիտրյանի դիմումի հիման վրա <<ՍԳԿԿ>> ԻԿ Դիտորդ խորհրդին 22.05.2023թ.-ին ներկայացված՝ 12.04.2023թ.-ի եզրակացության քննարկում:

3. <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ <<Ուստր Մամիկոն>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի վերաբերյալ՝ <<Հայէկոնոմբանկ>> ՍՊ ընկերության դիմումի հիման վրա <<ՍԳԿԿ>> ԻԿ Դիտորդ խորհրդին 26.05.2023թ.-ին ներկայացված՝ 16.05.2023թ.-ի եզրակացության քննարկում:

4.Ընթացիկ հարցեր :

Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> Ինքնակարգավորվող կազմակերպության Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոյանը, Գևորգ Ավագյանը , Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը, Վահագն Ավագյանը և Խաչիկ Նազարյանը :

Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ Արմինե Մովսիսյանին ենթարկել կարգապահական տույժի՝ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ հայտարարել նախազգուշացում, կողմ քվեարկեցին 5 Դիտորդ խորհրդի անդամներ՝ Ա.Չիտչյանը, Լ.Պետրոսյանը, Գ.Ավագյանը, Հ.Եղյանը և Տ.Սահակյանը : Տալ հրապարակային նկատողություն՝ կողմ քվեարկեց Խ.Նազարյանը, իսկ Վ.Ավագյանը նշեց, որ հաշվի առնելով գործի առթիվ հարուցված քրեական գործի ելքի անորոշությունը, ուստի ձեռնպահ է մնում քվեարկել :

<<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը՝ այն է՝ Արմինե Մովսիսյանին ենթարկել կարգապահական տույժի՝ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ հայտարարել նախազգուշացում :
5 կողմ ձայնով որոշումն ընդունվեց :

Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Գևորգ Ավագյանը, Հովհաննես Եղյանը, Տիգրան Սահակյանը, Վահագն Ավագյանը և Խաչիկ Նազարյանը:

Ա/Ձ Կարեն Խուդաթյանի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ռաֆիկի Մարտիրոսյանին ենթարկել կարգապահական տույժի՝ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ հայտարարել նախազգուշացում , կողմ քվեարկեցին 4 Դիտորդ խորհրդի անդամներ՝ Խ.Նազարյանը, Հ.Եղյանը, Տ.Սահակյանը և Գ.Ավագյանը : Տալ բանավոր նկատողություն, կողմ քվեարկեցին Դիտորդ խորհրդի 3 անդամներ՝ Լ.Պետրոսյանը, Ա.Չիտչյանը և Վ.Ավագյանը :

<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը՝ այն է՝ Կարեն Մարտիրոսյանին ենթարկել կարգապահական տույժի՝ բացահայտված խախտումները վերացնելու վերաբերյալ հայտարարել նախազգուշացում :
4 կողմ ձայնով որոշումն ընդունվեց :

Դիտորդ խորհրդի նախագահ Ա.Չիտչյանը ներկայացրեց օրակարգի 3-րդ հարցը և այն դրվեց քննարկման:

Մինչ օրակարգի հարցի քննարկմանը անցնելը Դիտորդ խորհրդի անդամ Հ.Եղյանը հայտարարեց ինքնաբացարկ, քանի որ օրակարգում ընդգրկված է իր, որպես սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարցի քննարկումը :

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Գևորգ Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Վահագն Ավագյանը և Խաչիկ Նազարյանը:

Դիտորդ խորհրդի բոլոր 6 անդամները կողմ քվեարկեցին <<Ուստր Մամիկոն>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի գործողությունների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճելուն:

<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը՝ այն է՝ կարճել <<Ուստր Մամիկոն>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի գործողությունների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

6 կողմ ձայնով որոշումն ընդունվեց :

Խորհրդի նախագահ՝ Ա.Չիտչյան

Նիստի քարտուղար՝ Գ.Հովսեփյան